ՐԱՖՖԻ

Հարեմ

1 - ԺԸ, ԺԹ

Արևը վաղուց մտել էր: Դեռ Ալմաստը և Քերիմ-բեկը, մտաբերելով յուրյանց տխուր անցյալը, խոսում էին: Մութ սենյակի մեջ բավականին թանձրացել էր, երբ Սալոմեն, ավարտելով յուր բժշկական գործողությունն ամուսնի ընկերի մոտ, ճրագը ձեռին ներս մտավ:

Ա՛խ, աչքերս քոռանա, ես ձեզ բոլորովին խավարի մեջ եմ թողել, կոչեց նա ափսոսելով:

Մութի մեջ նստելն ավելի լավ էր, խոսեց Քերիմ-բեկը, մենք չէինք ուզում տեսնել մեկ-մեկու արտասուքը...

Դուք լա՞ց էիք լինում...: Ա՛խ, Ալմաստ, քանի անգամ քեզ ասել եմ՝ հերի՛ք խոսես անցած բաների վրա: Ալմաստը չէր խոսում, ես էի խոսում... պատասխանեց Քերիմ-բեկը:

Անցածն անցել է, Մեխակ ջան, հառաջ տարավ Սալոմեն, հիմա փառք տվեք աստծուն, որ դու և Ալմաստը կրկին մեկ-մեկու հանդիպեցաք: Մտածեցեք Թիֆլիսի վրա, որ մեկ էլ նրան տեսնեք, մեկ էլ մեր Քուռի ջուրը խմեք:

Մենք արդեն վճռեցինք այդ:

Ա՛խ, ի՛նչ լավ կլիներ ինձ էլ ձեզ հետ տանեիք:

Դու կթողնե՞ս քո ամուսինը:

Չեմ թողնի Մեխակ ջան, ես նրան շատ եմ սիրում:

Դու Թիֆլիսն էլ ես շատ սիրում:

Սիրում եմ... Իսկի մտքիցս չէ գնում:

Մարդդ էլ կտանենք, այնտեղ վանքումը կմկրտենք, նա քեզ չկարողացավ մահմեդական շինել, մենք նրան քրիստոնյա կանենք: Մարդդ իմ խոսքիցը չի դուրս գալ:

Ի՞նչ լավ կլինի: Էրնե՛կ էն օրը...: Երեխես էլ մկրտել կտամ:

Քանի ժամից հետո եղավ դռան թխկոցը:

Ով գիտե նա է: Եկավ, ասաց Սալոմեն և դուրս վազեց:

Եվ իրավ, նույն միջոցին բակի դռնից ներս մտավ մի հսկայաձև տղամարդ փաթաթված մեշեդյան լայն վերարկուի մեջ: Նրա մուգ-դեղնագույն դեմքը ստանում էր ավելի ահեղ արտահայտություն աջ թշի վրա խոր ընկած սպիով, որ ձգվում էր հոնքի ծայրից մինչև ծնոտքի վերջը:

Ղաֆար-բեկը այդպես էր Սալոմեի ամուսնու անունը յուր երկրի սովորություններին հարմար չուզեց Քերիմ-բեկի մոտ մտնել, երբ Սալոմեից իմացավ, թե այնտեղ կար օտար կին: Նա շտապեց դեպի այն սենյակը, ուր պառկած էր յուր հիվանդ ընկերը:

Դու նամահրամ չես, լուսամուտից ձայն տվեց նրան Քերիմ-բեկը, ինձ մոտ գտնվող տիկինը Սալոմեի քույրացուն է:

Այս րոպեիս ձեր սպասումը կլինեմ, պատասխանեց ավազակապետը և մտավ մի այլ սենյակ:

Կինը գնաց նրա հետ: Նա ձգեց վերարկուն և երևվեցավ զինվորված ատրճանակներով, լայնաբերան կարաբինայով և ահագին խենջարով: Սալոմեն

սկսեց արձակել նրա զենքերը:

Էլի արյո՛ւն... կոչեց կինը սարսափելով: Սուս կա՛ց, կապի՛ր թևքս, ասաց ամուսինը:

Էլի կռվել ես դու:

Դու չե՞ս լռի:

Սալոմեն դողում էր ամբողջ մարմնով, տեսնելով, որ ամուսնի հագուստը բոլորը թաթախված է արյունով:

Էդ ո՞րտեղ էլավ, հարցրուց նա անհամբերությամբ:

Ամեն բա՞ն պետք է գիտենաս:

Ախա՛ր ինչու չես ասում:

Գլուխս մի՛ տար, կապի՛ր թևքս: Սալոմեն փաթաթեց վերքը և ավազակապետը, հագուստը փոխելով, հանգիստ և զվարթ դեմքով գնաց հյուրերի մոտ: Նրան անծանոթ չէին ո՛չ Քերիմ-բեկը և ո՛չ Զեյնաբ-խանումը: Երկուսի պատմությունը ևս նրան հայտնի էր: Նա յուր հյուրերի հետ բարևելու սովորական ծեսը կատարելուց հետո՝ նստեց Քերիմ-բեկի մոտ: Սալոմեն մատուց նրան ծխել ղեյլան, տեսնելով ամուսինը վրդոված է:

Ղաֆար-բեկն, այն քաջ տղամարդերից մինն էր, որոնք նշանավոր են յուրյանց հանդուգն, աներկյուղ և վեհ բնավորությամբ: Նա ծառայում էր Սեր-Ասքերի մոտ որպես նրա թիկնապահ զինվոր: Զանազան արշավանքներում նա ցույց տվեց յուր արիությունը, որով ոչ միայն գրավեց զորապետի շնորհը, այլև Քերիմ-բեկի բարեկամությունը: Թեհրանում մի անգամ նա առևանգեց մի իշխանի կին, որի հետ ուներ գաղտնի հարաբերություններ: Իշխանուհին քույր լինելով նշանավոր պաշտոնակալի, Ղաֆար-բեկը դատապարտվեցավ գլխատման: Այն ժամանակ Քերիմ-բեկը Սեր-Ասքերի միջնորդությամբ գործ դրեց ո՛չ միայն յուր ջանքը, այլև յուր արծաթը նրան ազատելու: Ավազակապետն այն օրից յուր կյանքը պարտական է համարում Քերիմ-բեկին, որպես յուր փրկչին:

Ի՞նչպես նասիբը հասնում է յուր նշանակությանը, խոսեց ավազակապետը, ակնարկելով երկու վաղուցվա սիրողներին՝ Ալմաստի և Մեխակի վրա:

Ճակատագիրը ջնջել ոչ ոք կարող չէ, պատասխանեց Քերիմ-բեկը:

Քերիմ-բեկը և Զեյնաբ-խանումը, ուզում են Թիֆլիս գնալ, մեջ մտավ Սալոմեն ծիծաղելով, ինձ էլ պիտի յուրյանց հետ տանեն: Դու էլ կգաս, այդպես չէ՞, Ղաֆար: Անպատճառ, պատասխանեց նա ծանր կերպով:

Դու հանա՞ք ես անում, հարցրուց Քերիմ-բեկը:

Հանաք չէ՛: Ես պետք է Թեհրանից հեռանամ...

Սալոմեն բոլորովին շփոթվեցավ ուրախությունից:

Ի՞նչ կա, հարցրուց Քերիմ-բեկը, նկատելով ավազակապետի անհանգիստ դեմքը:

Լոթիների (սրիկաների) ծախսի փողը հատել էր, էս գիշեր Մաշադի-Սամադ սեղանավորի սնդուկներին մի փառավոր այցելություն արեցինք...

Ի՞նչ պատահեցավ, անհամբերությամբ հարցրուց Սալոմեն:

Ոչինչ: Մենք վեր առանք սեղանավորի թթված ոսկիներից որքան մեզ պետք էր: Միայն ընկերոջիցս մինը բռնվեցավ:

Բռնվեցա՛վ... զարհուրելով կոչեց Սալոմեն: Նա քեզ կմատնե:

Նա չի մատնի, եթե կտոր-կտոր ևս անեն: Բայց ինձ ճանաչեցին:

Վա՛յ իմ գլխին... հառաչեց Սալոմեն և քիչ էր մնում, որ ուշքից գնա:

Հանգստացի՛ր, կին, ձայն տվեց ավազակապետը՝ բոլորովին սառնությամբ: Բայց իմ հիմար ընկերները վատ վարվեցան, դարձավ նա դեպի Քերիմ-բեկը, ծառաներից ոչ մինը կենդանի չմնաց և սեղանավորին առավոտյան գուցե կթաղեն:

Այդ վատ է... պատասխանեց Քերիմ-բեկը, Մաշադի-Սամադը Բարձրագույն դռան սեղանավորն է, էգուց շահը, Թեհրանի բոլոր ծակումուտները խուզարկություն անել կտա: Բայց ո՞վ ճանաչեց քեզ:

Կինը քնարանից ծածուկ դուրս էր պրծել և դեպի փողոցը ձայն էր ձգել. գիշերապահ զինվորները վրա հասան, նրանք ճանաչեցին ինձ կռվի մեջ:

Ալմաստը բոլոր մարմնով դողում էր: Սալոմեն դարձյալ չէր դադարում ախուվախ քաշելուց: Բայց ամուսինը մի կողմնակի հայացք ձգեց նրա վրա և կինը լռեց:

Եթե սեղանավորը լիներ մի այլ մարդ, հեշտ էր բանն ուղղել, հառաջ տարավ ավազակապետը, նրա ոսկիներից մի մասը կնվիրեինք մեծ վեզիրին, նա գործը կծածկեր: Բայց այժմ անհնարին է... Այդ ճշմարիտ է, պատասխանեց Քերիմ-բեկը: Բայց ինչ պետք է անել:

Ուրիշ հնար չկա, պետք է հեռանալ Թեհրանից: Այս րոպեիս կարող են պաշարել մեզ:

Վերջին խոսքը Քերիմ-բեկին նույնպես ձգեց խռովության մեջ:

Ե՞րբ հեռանալ, հարցրուց նա վրդոված ձայնով:

Այս րոպեիս, ուշանալ պետք չէ, պատասխանեց ավազակապետը նստած տեղից վեր կենալով:

Գնա՛նք... խոսեց Ալմաստը, որ բոլոր ժամանակ լսում էր:

Փախչե՛նք... հարցրուց Սալոմեն:

Այդպես անպատրաստ, ասաց Քերիմ-բեկը շվարած կերպով:

Ոչինչ պատրաստություն հարկավոր չէ, Քերիմ-բեկ, պատասխանեց ավազակապետը, ինչ որ ուզում ես՝ իմ տանը կա: Քաղաքի պարսպից դուրս մեկ մղոն հեռու սպասում են իմ ընկերները. նրանք ունեն յուրյանց հետ ավելորդ

ձիաներ, դու և քո ընկերուհին կարող եք նստել:

Տանդ իրեղենները պիտի թողնե՞ս, մեջ մտավ Սալոմեն:

Ինձ պետք է միայն մեկ բան վեր առնել, այն է այստեղ պառկած ընկերս:

Բաս երեխա՛ս... կոչեց արտասվելով Սալոմեն:

Այդ քո գործն է: Թող նա գա մեզ հետ և սովորի հոր արհեստը:

Ապա Մարջա՞նը... և Սա՛իդը մեջ մտավ Ալմաստը: Նրանց կմորթեն մեր գնալուց հետո:

Նրանք ո՞վ են, հարցրուց ավազակապետը:

Զեյնաբ-խանումի սպասավորը և սպասուհին, պատասխանեց Քերիմ-բեկը:

Նրանք էլ կարող են մեզ հետ լինել:

Ինչպես դուրս բերել նրանց ամրոցից:

Այդ ճանապարհին կխոսենք, պատասխանեց ավազակապետն շտապելով: Սալոմե, դարձավ նա դեպի կինը, դու առժամանակ պետք է այդ բարակ լաթերիցդ զրկվիս: Գնա՛, փոխի՛ր հագուստդ, ծպտվիր որպես ավազակ, եթե ուզում ես մեր խմբի մեջ մտնել:

Կարծեմ, միևնույնը կհոժարվի անել և Զեյնաբ-խանումը, ասաց Քերիմ-բեկը, նայելով յուր սիրուհու երեսին հարցական հայացքով: Ո՞րտեղից գտնել հագուստ, հարցրուց Ալմաստը:

Այդ սենյակի տակում դուք կգտնեք մի ամբողջ հանդերձատուն, պատասխանեց ավազակապետը: Սալոմե՛, տար տիկինը այնտեղ

Սալոմեն ճրագը վառեց, տարավ Զեյնաբ-խանումին մի այլ սենյակ, այնտեղ բարձրացրեց հատակի վրա սփռած գորգը: Երևան եղավ մի տախտակամած, Սալոմեն ձեռքը մեկնեց նշմարվող դռնակին: Տախտակամածը բարձրացավ:

Նրանց առջև բաց եղավ մի փոս ստորերկրյա սանդուղքներով: Սալոմեն նախ իջավ ցած և ճրագով լուսավորում էր մուտքը: Քանի րոպեից հետո նրանք հայտնվեցին ստորերկրյա սենյակում: Բորբոսահոտ խոնավությունն իսկույն զարկեց նրանց քթին: Այնտեղ թափված էին ժանգոտած զանազան մետալեղեն տնային կարասիք: Այնտեղ խառնիխուռն միմյանց վրա դիզված էին զանազան կանացի և այրացի թանկագին հագուստներ: Այնտեղ կային զենքերի ամեն տեսակները: Այնտեղ դրած էին թոփերով պես-պես աբրեշումեղեն, բրթեղեն և բամբակեղեն ապրանք: Մի խոսքով ամեն բան կարելի էր գտնել այնտեղ:

Այդ ի՞նչ է... զարմանալով հարցրուց Ալմաստը:

Ամուսնիս հարստությունը, պատասխանեց Սալոմեն ծիծաղելով:

Ո՞վ գիտե, բոլորը գողացել է:

Չէ՛, փող է տվել... հեգնորեն պատասխանեց Սալոմեն:

Երկու տիկինները փոխեցին յուրյանց հագուստը, զինվորվեցան ատրճանակներով և խենջարներով, և այնպես ծպտյալ կերպով դուրս եկան, ամեն մինը ձգած ունելով յուր բազուկի վրա մի վերարկու:

Հիմա ձեզ չէ կարելի որոշել նորահաս սրիկաներից, ասաց ավազակապետը, հետաքրքիր աչքերով չափելով երկու տիկինները, որոնք նույն հագուստով ավելի գեղեցիկ էին:

Հիմա դրանց հետ կարելի է ամեն տեղ գնալ, ավելացրեց Քերիմ-բեկը:

Ուրեմն դեպի ճանապարհը, պատասխանեցին տիկինները, որոնք կարծես մի նոր քաջազնական հոգի էին ստացել: Սալոմեն մոտեցավ յուր երեխայի օրորոցին, առեց քնած երեխան, փաթաթեց շալով, ծածկվեցավ յուր վերարկվի մեջ և նրա տակով, սեղմեց երեխան յուր կուրծքին:

Դուք ձեր տան իրեղենները բոլորը թողնում եք, դարձավ Քերիմ-բեկը դեպի ավազակապետը: Բոլորը, պատասխանեց նա: Կավկազում պատերազմ կա, Քերիմ-բեկ, ռուսները կռվում են պարսիկների հետ, այնտե, իմ մանգաղին առատ

հունձք է սպասում...»

«Գայլը միշտ թղպած օրն է սիրում...»:

«Իսկ գողը մթին գիշերներ» . . . պատասխաներ ավազակապետը: Նրանք դուրս գնացին:

Նրանք արդեն դռանն էին, երբ ավազակապետը դարձավ դեպի տնակը. մի րոպեում սատանայի պես անցավ բոլոր սենյակները, հետո մտավ հիվանդի մոտ, կրեց նրան ուսի վրա և հանեց դուրս:

Բարեկամ, ասաց նա վիրավորին, քեզ ստիպված եմ տեղափոխել մի այլ տուն:

Ո՞րտեղ, հարցրուց վիրավորը թույլ ձայնով:

Քո սիրուհու Զահրայի տունը, նա կխնամե քեզ:

Իսկ դո՞ւ:

Ե ս առժամանակ քեղանից բաժանվելու եմ...

Ավազակապետի տունը գտնվելով քաղաքի պարսպի մոտ, խրամատի վրա նրանք իսկույն իջան փոսը և անցան մյուս կողմը:

Քառորդ ժամ չէր անցել, երբ Սալոմեն հետ նայեց դեպի քաղաքը, տեսավ ահագին հրդեհ:

Էդ ի՛նչ կրակ է աստված, կոչեց նա սարսափելով:

Մեր տնակը, պատասխանեց ավազակապետը:

Ի՞նչ արիր...

Այրեցիր...

ԺԹ

Գիշերվա կեսն էր: Լուսնի եղջյուրն անհետացավ լեռան հետքում, և մութը պատեց բոլոր առարկաները: Ավազակապետն յուր նոր ընկերների հետ անցան լայնատարած գերեզմանատնից և հասան մի մատուռի, որ կանգնած էր դամբարանների մոտ:

Քերիմ-բեկ, այդ մատուռի մեջ մի փոքր սպասեցեք, մինչև ես իմ բեռից կթեթևանամ:

Այդ ասելով, ավազակապետը, ուսին կրած ընկերը հետը տանելով, աներևութացավ խավարի մեջ: Քերիմ-բեկն երկու տիկինների հետ թաքնվեցան մատուռի մեջ:

Հիմա մենք բախտավոր ենք, ասաց Ալմաստն ուրախ ձայնով, գրկելով Մեխակի պարանոցը:

Քերիմ-բեկը պատասխանեց այդ խոսքերին մի տաք համբույրով: Երանի՛ այն օրին, երբ այդպես կգրկեինք միմյանց Թիֆլիսում... ասաց նա:

Ես սպասում էի մի այլ խոսքի... պատասխանեց տիկինը խորհրդական ձայնով:

Երբ ես ամուսին, իսկ դու իմ կինը կլինեիր, ավելացրեց երիտասարդը:

Ալմաստը գլուխը դրեց յուր սիրեկանի գրկումը, կարծես, գիշերային խավարի մեջ նա աշխատում էր թաքցնել յուր վառված դեմքը:

Սայոմեն ընդհատեց այդ սրբազան լռությունը. և Ղաֆարը կլիներ ձեր խաչեղբայրը պսակի ժամանակ:

Իսկ դո՞ւ, հարցրուց Ալմաստը:

Ես էլ ձեզ համար ղեյլան կպատրաստեի, Թեհրանի բամբասանքները կանեի:

Դու աղջիկ ժամանակդ էլ մեզ օգնում էիր, Սալոմե:

Մի՞տդ է, Ալմաստ, մի օր Մեխակը խուրմա էր ուղարկել քեզ, ես բերեցի, թաքուն քեզ տվի:

Այն որ կես ճանապարհին գողացել էիր, ասաց Ալմաստը ծիծաղելով:

Հա՛, լավ միտս եկավ, դու էլ ծեծեցիր ինձ դրա համար:

Սույն միջոցին Սալոմեի երեխան ծլվաց:

Խե՜ղճ երեխա, նա չէ իմանում ուր են տանում իրան թե չէ, նա էլ մեզ պես կուրախանար... Մինչ դրանք մատուռի մեջ յուրյանց ազատությունով և ապագա հույսերով ուրախանում էին, ավազակապետը հասավ քաղաքից փոքր-ինչ հեռու արվարձանին: Այնտեղ կանգնեց նա մի տան առջև, որ ուներ փոքրիկ պարտեզ, դռան մուրճը զարկեց, շների հաչելու ձայնից զարթեցավ մի դեռահաս աղջիկ, որ միայնակ քնած էր յուր սենյակում: Չսպասելով մինչև դռան բացվիլը, ավազակապետը ցատկեց պարտեզի շրջապարսպից և յուր բեռը իջուց մյուս կողմը: Նույն րոպեին փոքրիկ սենյակի շեմքի վրա երևան եղավ դեռահաս աղջիկը ճրագը ձեռին, գիշերվա հագուստով:

Ով ե՞ս, հարցրուց նա վրդոված ձայնով, որովհետև ճրագի լույսն արգելում էր տեսնել խավարի մեջ եկվորին:

Ես եմ, պատասխանեց ավազակապնտը:

Այդ ձայնը ծանոթ էր օրիորդին, նա իսկույն լուսավորեց յուր կացարանի մուտքը և ներս հրավիրեց ավազակապետին:

Ռուստամից մի խաբա՞ր... եղավ օրիորդի առաջին խոսքը: Ահա՛, բերել եմ նրան . . . ասաց ավազակապետը և յուր շալակած բեռը դրեց օրիորդի քնաշորերի վրա:

Ա՛ռ, մեկնեց նա դեպի օրիորդը մի քսակ, և խնամք տար այն տղամարդին, որին սիրում ես:

Օրիորդը, փոխանակ առնելու քսակը, տեսնելով վիրավոր երիտասարդի արյունաքամ եղած և դալկացած դեմքը, արձակեց մի ցավալի հառաչանք և գրկեց նրան:

Ավազակապետը դրեց նրա մոտ արծաթի քսակը և շտապելով դուրս գնաց, այդպիսի խոսքերով.

Զահրա, խնամք տար Ռուստամին, դա քո սիրելին է, և իմ քաջ ընկերներից մինը: Մնացեք բարյավ, գուցե այլևս չտեսնվենք:

Դուրս գայով գեղեցիկ օրիորդի սենյակից, ավազակապետը քառորդ ժամի մեջ հասավ մատուռին:

Գնանք, ասաց Քերիմ-բեկին:

Գիշերային փախստականները կրկին ճանապարհ ընկան: Կես մղոն անցել էին, երբ հասան մի հին ամրոցի ավերակներին: Ավազակապետը շվացրուց, հեռվից պատասխանեցին միևնույն ձայնով:

Այստեղ են... ասաց նա և հառաջ գնաց:

Մի ստորերկրյա, գետնափոր խորանի ծակից, որ պատած էր բաղերով և մացառներով, աղոտափայլ լույսը նեղ ժապավեններով դուրս էր շողացել գիշերային խավարի մեջ: Ավազակապետը մոտեցավ ծակին և խորհրդավոր նշանախոսությամբ ձայն արձակեց և իսկույն դուրս սողացին երեք գլուխներ:

Ու՞ր է Հաշիմը, հարցրուց ավազակապետը:

Այնտեղ ձորի մեջ ձիաներն է արածացնում, պատասխանեց մինը:

Նա թո՛ղ մնա այնտեղ, հառաջ տարավ ավազակապետը, իսկ դուք, Ալի, Սամադ, Ասադ, այդ երկու հոգին, ցույց տվեց նա Ալմաստի և Սալոմեի վրա կպահեք ձեզ մոտ: Ճանաչում եք ովքեր են, մինն իմ կինն է, իսկ մյուսը նրա քույրը:

Մեր աչքի լույսի պես կպահենք, պատասխանեցին ավազակները:

Ես կդառնամ մեկ ժամից հետո, իսկ եթե ուշացա, դուք, այդ երկու հոգին ձեզ հետ առնելով, կանցնեք N . . . ի ձորը, այնտեղ կսպասեք ինձ:

Դու ո՞ւր ես գնում, հարց արին նրանից: Այդ պարոնի հետ պիտի դառնամ քաղաքը, ցույց տվեց նա Քերիմ-բեկի վրա:

Մեզանից ո՛չ մինը քեզ հարկավոր չի՞ լինի:

Դա բավական է:

Երբ ավազակապետը և Քերիմ-բեկը կամենում էին հեռանալ, Ալմաստը մոտեցավ և ասաց նրան.

Չուշանաս, Մեխակ ջան, ինձ մենակ չթողնես. Մարջանին և Սայիդին բեր հետդ:

Նրանց համար ենք գնում, պատասխանեց Քերիմ-բեկը, շուտով կդառնանք: